STATUS

Սակագներ և այլ պայմաններ Տեղեկատվական ամփոփագիր ֆիզիկական անձանց համար

Հրապարակման ամսաթիվ՝ փետրվար, 2024թ.

Ամփոփագրում նշված պայմանները կարող են փոփոխված լինել: Գործող պայմաններին ծանոթանալու, ինչպես նաև լրացուցիչ տեղեկատվություն ստանալու նպատակով այցելեք մեր ինտերնետային կայք՝ www.hsbc.am, ցանկացած մասնաճյուղ կամ զանգահարեք +374 60 655 000 հեռախոսահամարով:

HSBC Status

ԻՆՉ Է STATUS-Ը

HSBC STATUS-ը բանկային ծառայությունների փաթեթ է յուրահատուկ ֆինանսական կարիքներ ունեցող անձանց համար, ովքեր արժևորում և գնահատում են ծառայությունների և սպասարկման բարձր որակը և անհատական մոտեցումը:

Եթե գնահատում եք Ձեր ժամանակը և ունեք բանկային ամենատարբեր ծառայությունների կարիք, ապա STATUS ծառայությունը հենց Ձեզ համար է:

Դարձեք HSBC STATUS հաճախորդ, օգտվեք բանկային ծառայությունների մի ամբողջ փաթեթից, որն ուղղված է հոգալու Ձեր՝ ինչպես ընթացիկ բանկային, այնպես էլ վարկային, ապահովագրական և խնայողական կարիքները:

Հաղորդե՛ք նոր որակ բանկային ծառայություններին՝ դրանք դարձնելով ավելի անհատական:

HSBC
Status

ԻՆՉՊԵՍ ԴԱՌՆԱԼ STATUS ՀԱՃԱԽՈՐԴ

Դուք կարող եք անվճար օգտվել STATUS փաթեթից, եթե հանդիսանում եք Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստանի (այսուհետ՝ Բանկ) հաճախորդ, և Ձեր հաշիվների տվյալները բավարարում են հետևյալ պայմաններից որևէ մեկին՝

- Բանկի Ձեր հաշիվների առկա միջին դրական մնացորդը վերջին երեք ամիսներին կազմել է առնվազն 20 միլիոն ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ
- Դուք STATUS հաճախորդի ընտանիքի անմիջական անդամ եք (ամուսին, հայր, մայր, որդի, դուստր)[1]
- Ձեր ամսական զուտ աշխատավարձը և դրան հավասարեցված եկամուտները կազմում են առնվազն 2.5 միլիոն ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ և փոխանցվում են Բանկում սպասարկվող Ձեր հաշվին[2]
- Ձեր անհատական վարկային պորտֆելը[3] Բանկում տվյալ պահին կազմում է առնվազն 100 միլիոն ՀՀ դրամ
- Դուք բավարարում եք Էյչ-Էս-Բի-Սի Խմբի Premier կամ Private Banking-ի պայմաններին
- Բանկի կորպորատիվ հաճախորդի բաժնետեր կամ տնօրեն հանդիսանալու դեպքում Բանկն, իր հայեցողությամբ, կարող է առաջարկել Ձեզ STATUS կարգավիճակ

Վերը նշված պայմաններին հետագայում չբավարարելու դեպքում Բանկի հայեցողությամբ կարող եք ժամանակավորապես օգտվել STATUS ծառայությունից՝ ամսական վճարելով 20 000 ՀՀ դրամ[4]:



1 Ընտանիքի անդամը կարող է օգտվել STATUS ծառայությունից այն դեպքում, եթե STATUS հաճախորդի Բանկի հաշիվներին առկա միջին դրական մնացորդը վերջին երեք ամիսների ընթացքում կազմել է առնվազն 20 միլիոն ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ:
2 Ընդ որում, STATUS հաճախորդ դառնալու պահից սկսած, Ձեզ տրվում է 24 ամիս արտոնյալ ժամանակահատված համապատասխանելու վերոնշյալ առաջին կետով սահմանված հաշիվների՝ վերջին եռամսյակային միջին դրական մնացորդի նվազագույն պահանջին:
3 STATUS ծառայությունը կգործի մինչև վարկերի ամբողջական մարումը:
4 Կիրառելի չէ STATUS կարգավիճակ ստանալուց հետո 6 ամսվա ընթացքում:

ԱՄԵՆՕՐՅԱ ԲԱՆԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱԿԱԳՆԵՐ

Հաշիվների բացում և սպասարկում

Ընթացիկ և խնայողական հաշիվների բացում	Վճար չի կիրառվում
Ընթացիկ և խնայողական հաշիվների սպասարկում	Վճար չի կիրառվում
Ժամկետային ավանդային հաշիվների բացում և սպասարկում (ներառյալ կուտակային ժամկետային ավանդային հաշիվները)	Վճար չի կիրառվում
Էսքրոու հաշիվ[1]	Էսքրոու գումարի 0.5%-ը (նվազագույնը՝ 100 000 ՀՀ դրամ առավելագույնը՝ 500 000 ՀՀ դրամ)

Միջազգային VISA PLUS բանկոմատային քարտ

Քարտի թողարկում և սպասարկում	Վճար չի կիրառվում
Հավելյալ քարտի թողարկում և սպասարկում	Վճար չի կիրառվում
Քարտի վերաթողարկում	Վճար չի կիրառվում
Հավելյալ քարտի վերաթողարկում	Վճար չի կիրառվում
Կանխիկացում Էյչ-Էս-Բի-Սի Խմբի և Ամերիաբանկի բանկոմատներից	Վճար չի կիրառվում
Կանխիկացում Էյչ-Էս-Բի-Սի Խմբի անդամ չհանդիսացող այլ բանկերի բանկոմատներից	2 000 ՀՀ դրամ յուրաքանչյուր գործարքի համար
Կանխիկացման օրական սահմանաչափ	1 000 000 ՀՀ դրամ[2]
Հաշիվների միջև մեր բանկոմատների միջոցով ներբանկային փոխանցում	Վճար չի կիրառվում
Բանկի բանկոմատների միջոցով փոխանցման օրական սահմանաչափ	3 000 000 ՀՀ դրամ

1 Էսքրոու հաշիվը Բանկի կողմից տրամադրվող միանվագ ծառայություն է, որը նախատեսված է անշարժ գույքի առքուվաճառքի գործարքների ընթացքում կողմերի միջև հաշվարկների ապահով իրականացման համար:

2 Սահմանաչափը կարող է տարբերվել՝ պայմանավորված տվյալ երկրում կամ բանկում գործող սահմանափակումներով:

ԿՐԵԴԻՏ ԵՎ ՎՃԱՐԱՅԻՆ ՔԱՐՏԵՐ*

ԿԱՆԽԻԿՈՎ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ / ԳՈՐԾԱԴՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

* Ներառյալ հավելյալ քարտի տրամադրումը և սպասարկումը

Մաստերքարտ World Black Edition քարտի տրամադրում	Վճար չի կիրառվում
Մաստերքարտ World Black Edition քարտի սպասարկում	2 000 ՀՀ դրամ ամսական
ԱրՔա Կլասիկ քարտի տրամադրում և սպասարկում	Վճար չի կիրառվում
Մաստերքարտ Ստանդարտ քարտի տրամադրում և սպասարկում	Վճար չի կիրառվում
Մաստերքարտ Ոսկի քարտի տրամադրում և սպասարկում	Վճար չի կիրառվում
Մաստերքարտ Պլատինում քարտի տրամադրում և սպասարկում	Վճար չի կիրառվում

Կանխիկի մուտքագրում մասնաճյուղերում	Վճար չի կիրառվում
Կանխիկի մուտքագրում բանկոմատի միջոցով[1]	Վճար չի կիրառվում
ՀՀ դրամով, ԱՄՆ դոլարով և եվրոյով կանխիկ մուտքագրված դրամական միջոցների կանխիկացում	Վճար չի կիրառվում
Անկանխիկ գումարների կանխիկացում ԱՄՆ դոլարով/եվրոյով[2]*	0.75%
ՀՀ դրամով անկանխիկ մուտքագրված դրամական միջոցների կանխիկացում (օրական)	Մինչև 3 000 000 ՀՀ դրամ՝ վճար չի կիրառվում[3]*
	3 000 000 ՀՀ դրամից ավել՝ գերազանցող գումարի 0.2%, նվազագույնը՝ 1 000 ՀՀ դրամ
Կանխիկ/անկանխիկ գումարների կանխիկացում այլ արժույթներով[4]	3%

1 Կանխիկի մուտքագրման առավելագույն օրական սահմանաչափը՝ 1 միլիոն ՀՀ դրամ բանկոմատային քարտին կցված յուրաքանչյուր հաշվին: Ծառայությունը հասանելի է, եթե տվյալ բանկոմատն ունի կանխիկի մուտքագրման հնարավորություն:

2 Տվյալ սակագինը կիրառելի է վարկերի գումարների կանխիկացումների դեպքում: Սակագինը կիրառելի չէ արտարժույթի փոխարկման գործարքների գումարների (այդ թվում՝ մինչև 2023թ. օգոստոսի 18-ը կատարված փոխարկումների) և ավանդների տոկոսագումարների կանխիկացման դեպքում:

3 Տվյալ սակագինը կիրառելի չէ ավանդների տոկոսագումարների, արտարժույթի փոխարկման գործարքների (այդ թվում՝ մինչև 2023թ. օգոստոսի 18-ը կատարված փոխարկումների) և վարկերի գումարների կանխիկացման դեպքում:

4 Կիրառելի է արտարժույթի փոխարկման գործարքների գումարների (այդ թվում՝ մինչև 2023թ. օգոստոսի 18-ը կատարված փոխարկումների), ինչպես նաև տրամադրված վարկերի գումարի կանխիկացումների դեպքում:

* Կանխիկ են համարվում 91 օր և ավել պայմանագրային ժամկետով այն ավանդների մայր գումարները, որոնք չեն դադարեցվել մինչև պայմանագրային ժամկետի ավարտը, ինչպես նաև ավելի կարճ պայմանագրային ժամկետով այն ավանդների մայր գումարները, որոնք անընդմեջ վերակնքվել են որպես ավանդ 91 օր և ավել ժամանակահատվածում:

ՀԱՇԻՎՆԵՐԻ ՀԵՌԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հեռախոսային բանկային ծառայություն

Ծառայության գրանցում և սպասարկում	Վճար չի կիրառվում
Այլ բանկային ծառայությունների օգտագործում	Համաձայն գործող Ծառայությունների Սակագների

Օնլայն և Մոբայլ[1] բանկային ծառայություններ

Օնլայն բանկային ծառայության գրանցում և սպասարկում	Վճար չի կիրառվում
Մոբայլ բանկային ծառայության գրանցում և սպասարկում	Վճար չի կիրառվում
Անվտանգության սարքի տրամադրում կամ փոխարինում	Վճար չի կիրառվում

Կարևոր նշում

Բանկը կարող է միակողմանի դադարեցնել Ձեզ հետ կնքած Հեռախոսային և/կամ Օնլայն/Մոբայլ բանկային ծառայություններից օգտվելու պայմանագրերը, եթե վերջին 12 ամիսների ընթացքում Հեռախոսային բանկային ծառայության միջոցով գործարք չի կատարվել և/կամ Ձեր Օնլայն/Մոբայլ բանկային համակարգի օգտագործողի անունն ակտիվ չի եղել (համակարգ մուտք չի գրանցվել):

1 Մոբայլ բանկային ծառայությունը հասանելի է միայն Բանկի Օնլայն բանկային ծառայությանը գրանցված հաճախորդներին:

Փոխանցումներ ՀՀ տարածքում[1]

Հաշվից փոխանցումներ ՀՀ դրամով[2]	Վճար չի կիրառվում
Հաշվից փոխանցումներ ԱՄՆ դոլարով և եվրոյով[3]	5 000 ՀՀ դրամ
Ստացված գումարների մուտքագրում հաշվին	Վճար չի կիրառվում

Փոխանցումներ/Բանկային մուրհակներ արտարժույթով

Ելքային փոխանցում (USD, EUR, GBP, RUB, CHF, AUD, AED, HKD, JPY, CAD)	0.1%
Մուրհակների տրամադրում (USD, EUR, GBP, RUB, CHF, AUD, AED, HKD, JPY, CAD)	0.1%
Ստացված փոխանցումների մուտքագրում հաշվին	Վճար չի կիրառվում

Այլ պայմաններ

Բանկում առկա հաշիվների միջև փոխանցումներ	Վճար չի կիրառվում
Վճարման հանձնարարականի փոփոխում/չեղարկում	Վճար չի կիրառվում
Արտարժույթով վճարման հանձնարարականի ուսումնասիրման վճար (գանձվում է անկախ ուսումնասիրման արդյունքներից)	20 000 ՀՀ դրամ

1 ՀՀ տարածքում ՀՀ դրամով փոխանցումների դեպքում, եթե փոխանցվող գումարը պարունակում է լումա, ապա այն կկլորացվի մինչև տասնորդական նիշը՝ ստանդարտ մոտեցմամբ:
2 Եթե վճարման հանձնարարականը (մինչև 50 միլիոն ՀՀ դրամ) ներկայացվում է մասնաճյուղ կամ Հեռախոսային բանկային ծառայության կամ Օնլայն/Մոբայլ բանկային ծառայության միջոցով ժամը 15:00-ից հետո, այն կատարվում է հաջորդ օրը:
3 Մինչև ժամը 14:00 ներկայացված հանձնարարականները կկատարվեն առավելագույնը հաջորդ գործառնական օրվա ընթացքում: Ժամը 14:00-ից հետո ներկայացված հանձնարարականները կկատարվեն հաջորդ գործառնական օրվա ընթացքում:

Կարևոր նշումներ

- Արտարժույթով արտերկիր ցանկացած ելքային փոխանցման կամ բանկային մուրհակի տրամադրման դեպքում նվազագույն միջնորդավճար՝ 6 000 ՀՀ դրամ
- Եթե փոխանցված միջոցներն արդեն վճարված են շահառուին, ապա Բանկը պատասխանատվություն չի կրում գումարների վերադարձման համար
- Միջնորդ/շահառու բանկ(եր)ի գանձումները կարող են վճարվել թե՛ փոխանցողի, և թե՛ ստացողի կողմից՝ Հաճախորդի ընտրությամբ՝ նախօրոք համաձայնեցնելով Բանկի հետ
- Միջնորդ/շահառու բանկ(եր)ի միջնորդավճարները՝ փոխանցողի հաշվից գանձման դեպքում (երբ շահառուն գումարը պետք է ստանա առանց պահումների)՝ 5 000 ՀՀ դրամ
- Եթե փոխանցման շղթայում առկա է մեկից ավելի միջնորդ բանկ, որոնց կողմից գանձված վճարների հանրագումարը գերազանցում է 20 000 ՀՀ դրամի համարժեքը, ապա վճարված 5 000 ՀՀ դրամի և Բանկից փաստացի պահված միջնորդավճարների տարբերությունը կգանձվի փոխանցողի հաշվից:

Չեկեր/Չեկային գրքույկ[1]

Չեկային գրքույկի տրամադրում	Վճար չի կիրառվում
Վճարման արգելանքի կիրառում/չեղարկում	Վճար չի կիրառվում
Անբավարար մնացորդի պատճառով չեկի վերադարձ	Վճար չի կիրառվում

Այլ չեկեր

Մուրհակների և այլ չեկերի մուտքագրում հաշվին	Վճար չի կիրառվում[2]
Չվճարված չեկի վերադարձ	10 000 ՀՀ դրամ գումարած միջնորդ/ վերադարձնող բանկերի գանձումները

1 Չեկային գրքույկները տրամադրվում են միայն ՀՀ դրամով կամ ԱՄՆ դոլարով ընթացիկ հաշիվ ունեցող հաշվետերերին:
2 Չեկով մուտքագրված միջոցների արտարժույթով կանխիկացման դեպքում կկիրառվի անկանխիկ միջոցների կանխիկացման սակագինը:

Բանկային հաշվի քաղվածքների/այլ փաստաթղթերի առաքում/տրամադրում (ամսական)

Փոստով ՀՀ տարածքում	Վճար չի կիրառվում
Էլեկտրոնային փոստով	Վճար չի կիրառվում
Օնլայն բանկային ծառայության միջոցով	Վճար չի կիրառվում
Բանկի մասնաճյուղում	Վճար չի կիրառվում

Այլ ծառայություններ

Լիազորագրի ձևակերպում	Վճար չի կիրառվում
Հաշվեկշռի հաստատման[1] /բանկային հաշվի/ վարկի վերաբերյալ տեղեկանք	Վճար չի կիրառվում
Բանկային հաշվի յուրաքանչյուր 1 ամսվա քաղվածքի, 1 ամսվա հաշվի պատմության կամ յուրաքանչյուր 1 գործարքի վավերացման փաստաթղթի կրկնօրինակի տրամադրում (եթե հայցվում է 6 ամսից ավել վաղեմության տեղեկատվություն)	3 000 ՀՀ դրամ[2]*

1 Հաշվեկշիռը հաստատող տեղեկանքը տրամադրվում է հայտը ստանալու օրվա և ժամի դրությամբ:
2 Օնլայն/Մոբայլ կամ Հեռախոսային Բանկային ծառայության միջոցով դիմելու դեպքում կկիրառվի նվազեցված վճար՝ 1 000 ՀՀ դրամ յուրաքանչյուր կրկնօրինակի համար: Փաստաթուղթը կուղարկվի Ձեր նախընտրած մասնաճյուղը դիմումի ստացման օրվանից 3-5 աշխատանքային օրվա ընթացքում:
* Ներառյալ ԱԱՀ

Արտոնյալ պայմաններ՝ Ժամկետային ավանդների և Վարկերի համար[1]

Ժամկետային ավանդներ	
Ժամկետային ավանդներ (բացառությամբ Կուտակային ժամկետային ավանդների)	**Տարեկան անվանական տոկոսադրույք ՀՀ դրամով՝** + 0.5% ստանդարտ տոկոսադրույքին **Տարեկան անվանական տոկոսադրույք ԱՄՆ դոլարով՝** + 0.25% ստանդարտ տոկոսադրույքին

Վարկեր	
Անշարժ գույքի ձեռքբերման վարկ	**Տարեկան անվանական տոկոսադրույք ՀՀ դրամով՝** -0.5% ստանդարտ տոկոսադրույքից **Տարեկան անվանական տոկոսադրույք ԱՄՆ դոլարով՝** -1% ստանդարտ տոկոսադրույքից
	Վարկի տրամադրման վճար՝ -0.5% ստանդարտ սակագնից, առավելագույնը՝ 200 000 ՀՀ դրամ
Անշարժ գույքի վերանորոգման վարկ	**Տարեկան անվանական տոկոսադրույք ՀՀ դրամով՝** -0.5% ստանդարտ տոկոսադրույքից **Տարեկան անվանական տոկոսադրույք ԱՄՆ դոլարով՝** -1% ստանդարտ տոկոսադրույքից
	Վարկի տրամադրման վճար՝ -0.5% ստանդարտ սակագնից, առավելագույնը՝ 100 000 ՀՀ դրամ

1 Յուրաքանչյուր ծառայության մասին հավելյալ տեղեկատվություն կարող եք ստանալ Բանկի կայքէջի Վարկեր և Ներդրումներ բաժիններից՝ www.hsbc.am:

Անշարժ գույքի գրավով ապահովված անհատական վարկ	**Վարկի տրամադրման վճար՝** -0.5% ստանդարտ սակագնից, առավելագույնը՝ 100 000 ՀՀ դրամ
Ավտոմեքենայի վարկ	**Տարեկան անվանական տոկոսադրույք՝** -1% ստանդարտ տոկոսադրույքից
	Վարկի տրամադրման վճար՝ -0.5% ստանդարտ սակագնից, առավելագույնը՝ 100 000 ՀՀ դրամ
Անհատական սպառողական վարկ	**Վարկի տրամադրման վճար՝** -1% ստանդարտ սակագնից, առավելագույնը՝ 20 000 ՀՀ դրամ
	Մինչև 15 000 000 ՀՀ դրամ վարկի գումար

Ապահովագրական ծառայություններ	
Անշարժ գույքի ապահովագրություն (Բանկի կողմից տրամադրված վարկերի դեպքում)	**Ապահովագրական տոկոսադրույք՝** -0.02% ստանդարտ սակագնից

HSBC
world
black edition
VALID
THRU

Որպես STATUS հաճախորդ Ձեզ կտրամադրվի Մաստերքարտ World Black Edition քարտը, որը հանդիսանում է Մաստերքարտ վճարահաշվարկային համակարգի՝ Հայաստանում ներկայացված պրեմիում դասի քարտերից լավագույնը:

Քարտի փաթեթը ներառում է՝

Անվտանգություն և հարմարավետություն

Մաստերքարտ World Black Edition քարտն ապահովում է անվտանգության բարձր մակարդակ: Կատարեք արագ և անվտանգ վճարումներ նորարարական Անհպում տեխնոլոգիայով:

Մուտք բիզնես սպասասրահ (Lounge Key)

Lounge Key ծառայությունը մուտքի հնարավորություն է տալիս աշխարհի ավելի քան 1100 օդանավակայանների բարձրակարգ սպասարկման սրահներ: Որպես քարտատեր Դուք ստանում եք 10 անվճար մուտքի հնարավորություն նշված օդանավակայանների սպասարկման սրահներ տվյալ օրացուցային տարվա համար: Օդանավակայանների սպասասրահներ այցելելուց առաջ, խնդրում ենք ծանոթանալ տվյալ սրահ այցելության պայմաններին և այլ մանրամասներին www.loungekey.com/wbe-arm ինտերնետային կայքում:

Անվտանգության անցակետի արտահերթ սպասարկում (Fast Track)

Փաթեթի շրջանակներում Դուք ստանում եք օդանավակայանների անվտանգության անցակետերում արտահերթ սպասարկման տարեկան 10 անվճար հնարավորություն Mastercard Travel Experiences (https://travelexperiences.mastercard.com/) հավելվածի Fast Track ծառայության միջոցով:

Միջազգային ռոումինգ

Ճանապարհորդելիս վայելեք 1 ԳԲ անվճար միջազգային ռոումինգ և 15% զեղչ հաջորդիվ ծառայությունների համար աշխարհի ավելի քան 200 երկրներում Մաստերքարտ Flexi Roam (www.flexiroam.com) ծառայության շնորհիվ:

Lounge Key, Mastercard Travel Experiences և Flexi Roam ծառայությունները հասանելի են նաև Մոբայլ հավելված տարբերակով. ներբեռնեք հավելվածները App Store կամ Google Play TM հարթակներից՝ մուտքագրելով ծառայության անվանումը և գրանցվեք համաձայն հրահանգների:

Հավելվածի միջոցով Ձեզ հասանելի կլինեն նաև գործող զեղչերն ու հատուկ առաջարկները:

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՓԱԹԵԹ

Ճանապարհորդության ապահովագրության անվճար փաթեթը Ձեզ է առաջարկում մի շարք ապահովագրական ծառայություններ մինչև 500 000 ԱՄՆ դոլար արժողության ծածկույթով ամբողջ աշխարհում: Վայելեք Ձեր ուղևորությունը, իսկ Ձեր Մաստերքարտ World Black Edition քարտը կհոգա մնացածի մասին:

Ապահովագրական ծառայություններ	Հատուցման գումարի առավելագույն սահմանաչափ (ԱՄՆ դոլար)
Անհապաղ բժշկական տարհանում/ աճյունի վերադարձ	500 000
Բժշկական ծախսեր (վնասվածք կամ հիվանդություն)	500 000
Հիվանդանոցային ամենօրյա նպաստ	100
Անձնական դժբախտ պատահարից ապահովագրություն ամբողջ ուղևորության համար	Արտագնա՝ 500 000 Ներգնա՝ 100 000
Ուղեբեռի կորուստ	3 000 (625 յուրաքանչյուր մեկ կտորի համար)
Ուղեբեռի ուշացում (4 ժամից ավել)	300
Ուղևորության չեղարկում	7 500
Բաց թողնված թռիչք	7 500
Ուղևորության հետաձգում (4 ժամից ավել)	300

Ապահովագրական այլ պայմանների՝ ներառյալ երեխաների/տան օգնականի համար գործող ծածկույթի, ինչպես նաև բացառությունների, սահմանափակումների և այլ պայմանների մանրամասն տեղեկատվությանը կարող եք ծանոթանալ Բանկի կայքէջում (www.hsbc.am/status/terms/)՝ Ճանապարհորդության ապահովագրական պայմանագրում:

Պարտադիր պայման՝ ճանապարհորդության ապահովագրությունը գործում է միայն այն դեպքում, երբ ճանապարհորդության ուղևորափոխադրման ծախսը վճարվել է Ձեր Մաստերքարտ World Black Edition քարտով:

Վերոնշյալ ապահովագրական ծածկույթի շրջանակներում գործում է նաև Աջակցության՝ Assistance Department ծառայությունը, որն ապահովում է փաստաթղթային, խորհրդատվական և բժշկական աջակցություն ամբողջ աշխարհում: Ծառայությունը հասանելի է 24 ժամ +44 12 7376 5321 հեռախոսահամարով:

ՀՐԱՏԱՊ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՐՏԵՐԿՐՈՒՄ[1]

ՀԱՏՈՒԿ ԱՌԱՔԱՐԿՆԵՐ ԵՎ ՁԵՌՁԵՐ

1 Ծառայության սակագներին կարող եք ծանոթանալ «ՔԱՐՏԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՃԱՐՆԵՐ ԵՎ ԳԱՆՁՈՒՄՆԵՐ» բաժնում

Ճանապարհորդելիս եղեք ավելի վստահ Մաստերքարտ World Black Edition քարտի հետ, եթե նույնիսկ կորցրել եք Ձեր կանխիկը կամ քարտը: Մաստերքարտի Գլոբալ Ծառայության միջոցով Ձեր քարտն արտասահմանում կվերաթողարկվի մինչև 48 ժամվա ընթացքում, իսկ մինչև 2 000 ԱՄՆ դոլար կանխիկ Ձեզ կտրամադրվի Ձեր կարիքների համար 24 ժամվա ընթացքում:

Օգտվեք հատուկ զեղչերից և առաջարկներից, որոնք գործում են Հայաստանում գտնվող ավելի քան 100 առևտրի և սպասարկման կետերում և արտերկրում գտնվող բազմաթիվ հյուրանոցներում, ռեստորաններում, սպա կենտրոններում և առևտրի սրահներում, որոնց կարող եք ծանոթանալ Բանկի կայքէջի www.hsbc.am/credit-cards/discounts/ ենթաբաժնում:

ԱՆՎՃԱՐ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՈՆՍԻԵՐԺ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Միջազգային Կոնսիերժ ծառայությունը հնարավորություն կընձեռի պատվիրել զանազան ծառայություններ, կատարել տեղեկատվական հարցումներ, թեթևացնել Ձեր ամենօրյա գնումները, պատվիրել ավիատոմսեր, կատարել տարբեր տիպի ամրագրումներ ինչպես Հայաստանում, այնպես էլ արտասահմանում:

Միջազգային Կոնսիերժ ծառայությունը Մաստերքարտ World Black Edition քարտապաններին տրամադրվում է անվճար:

Միջազգային Կոնսիերժ ծառայությանը միանալու համար անհրաժեշտ է ընդամենը մեկ զանգ +374 (95) 515 515 կամ +7 (499) 500 44 46 հեռախոսահամարին, ինչպես Հայաստանում, այնպես էլ արտերկրում: Ձեր տվյալների նույնականացումից և հարցումը ընդունելուց հետո, օպերատորը հետ կզանգահարի Ձեր խնդրին լուծում տալու կամ հարցին պատասխանելու համար: Ծառայությունը հասանելի է Telegram հավելվածի միջոցով՝ @HSBCConcierge_bot:

Aspire Lifestyles Կոնսիերժ ծառայության օպերատորները խոսում են ինչպես ռուսերեն, այնպես էլ անգլերեն:



Միջազգային Կոնսիերժ ծառայությունը կազմակերպում է հետևյալ ծառայությունների տրամադրումը՝

Օժանդակություն ճանապարհորդելիս

- տոմսերի և ուղևորության հետ կապված տեղեկատվության տրամադրում
- տարբեր ամրագրումների և հյուրանոցների վերաբերյալ տեղեկատվության տրամադրում
- Lounge Key ծառայության վերաբերյալ տեղեկատվության տրամադրում և առաքում
- օդանավակայանների VIP սրահների մասին տեղեկատվության տրամադրում և ամրագրում
- ավտոմեքենաների վարձույթի և լիզինգի վերաբերյալ տեղեկատվության տրամադրում
- ճանապարհորդության ժամանակ բազմաբնույթ տեղեկատվության տրամադրում՝ վիզաների, եղանակի, տվյալ երկրին բնորոշ անվտանգության և այլ հարցերի վերաբերյալ
- ճանապարհորդության համակարգում

Հանգստի ճիշտ կազմակերպում

- տեղեկատվության տրամադրում ռեստորանների վերաբերյալ, ցանկության դեպքում՝ սեղանների ամրագրում
- տեղեկատվություն սպորտային, մշակութային և այլ միջոցառումների վերաբերյալ, ցանկության դեպքում տոմսերի ամրագրում
- տեղեկատվություն հանգստավայրերի և առողջարանների վերաբերյալ, ցանկության դեպքում նաև ամրագրում
- տարբեր ապրանքների մասին տեղեկատվության տրամադրում, գնման և առաքման ծառայություն
- տաքսի ծառայության տրամադրում
- հաճախորդի տարատեսակ միջոցառումների կազմակերպում

Բիզնես ծառայություններ

- սուրհանդակային/առաքչի ծառայություններ
- խորհրդատվություն և օժանդակություն որևէ փաստաթղթի կորստի դեպքում
- նվերների առաքում
- փաստաթղթերի թարգմանություն թարգմանչական գրասենյակների միջոցով
- գրասենյակային տարածքների վարձույթ, գրասենյակային սարքավորումների ձեռքբերում

Օգնություն ճանապարհին

- մեքենայի հրատապ էվակուացիա
- մեքենայի անսարքությունների վերացում և վերանորոգում ճանապարհին

Նշումներ

Կոնսիերժ ծառայությունն ակտիվացնելու կարիք չկա: Եթե Բանկի Մաստերքարտ World Black Edition քարտապան եք, ապա ծառայությունն արդեն ակտիվացված է:

Ծառայություններ պատվիրելիս կամ ամրագրումներ իրականացնելիս վճարումներ կարող եք կատարել Ձեր Մաստերքարտ World Black Edition քարտով:

ՔԱՐՏԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՃԱՐՆԵՐ ԵՎ ԳԱՆՁՈՒՄՆԵՐ

Քարտի տեսակ	Մաստերքարտ World Black Edition քարտ
Քարտի արժույթ	ՀՀ դրամ
Քարտի թողարկում	Վճար չի կիրառվում
Քարտի ամսական սպասարկում	2 000 ՀՀ դրամ
Հավելյալ քարտի թողարկում	Վճար չի կիրառվում
Հավելյալ քարտի ամսական սպասարկում[1]	2 000 ՀՀ դրամ
Վարկային գծի տարեկան անվանական տոկոսադրույք	18%
Վարկային գծի տարեկան փաստացի տոկոսադրույք	19.77%-21.69%[2]
Կանխիկացման վճար Բանկի բանկոմատներից և POS տերմինալներից, ինչպես նաև Ամերիաբանկի բանկոմատներից օգտվելու դեպքում	Վճար չի կիրառվում
Կանխիկի տրամադրման վճար՝ ArCa համակարգում գործող այլ բանկոմատներից և POS տերմինալներից կանխիկացնելիս	Կանխիկացված գումարի 1.5% (նվազագույնը՝ 500 ՀՀ դրամ)
Կանխիկացման վճար՝ ArCa համակարգին չպատկանող բանկոմատներից և POS տերմինալներից կանխիկացնելիս (ներառյալ արտերկրում կանխիկացնելիս)	Կանխիկացված գումարի 2.5% (նվազագույնը 1 000 ՀՀ դրամ՝ բանկոմատներից, նվազագույնը 3 000 ՀՀ դրամ՝ POS տերմինալներից)
Արտասահմանում կանխիկի հրատապ տրամադրման վճար[3] (մինչև 2 000 ԱՄՆ դոլար)	50 000 ՀՀ դրամ
Բանկի կրեդիտ քարտերի միջև գումարների փոխանցում (ԱրՔա կայքի կամ հավելվածի միջոցով՝ www.arca.am)	Փոխանցված գումարի 0.75%
Բանկի կրեդիտ քարտերից ԱրՔա համակարգում գործող այլ վճարային քարտերին գումարների փոխանցում (ԱրՔա կայքի կամ հավելվածի միջոցով՝ www.arca.am)	Փոխանցված գումարի 1.5%
Քարտի վերաթողարկում	Վճար չի կիրառվում

1 Հավելյալ քարտի սակագները կարգավորվում են հիմնական քարտի սակագներով:
2 Տարեկան փաստացի տոկոսադրույքի վերաբերյալ մանրամասն տեղեկատվությունը հասանելի է մեր կայքում՝ www.hsbc.am
3 Հայաստանից դուրս կանխիկի հրատապ տրամադրման (24 ժամվա ընթացքում), ինչպես նաև քարտի հրատապ վերաթողարկման համար՝ (48 ժամվա ընթացքում), խնդրում ենք զանգահարել +374 60 655 000 Բանկի հեռախոսային կենտրոնի համարով:

Հավելյալ քարտի վերաթողարկում	Վճար չի կիրառվում
Արտասահմանում քարտի հրատապ վերաթողարկման վճար[1]	75 000 ՀՀ դրամ
Քարտի ապաբլոկավորում	Վճար չի կիրառվում
Գործարքի կրկնօրինակի տրամադրման վճար	8 000 ՀՀ դրամ
Իրական գործարքի ոչ ճիշտ վիճարկում	15 000 ՀՀ դրամ
Քարտի վարկային սահմանաչափի մշտական կամ ժամանակավոր վերանայում	Վճար չի կիրառվում
SMS ծառայություն	Վճար չի կիրառվում
Ամսական քաղվածքի առաքում/տրամադրում (ՀՀ տարածքում)	Վճար չի կիրառվում
Քարտային հաշվի յուրաքանչյուր 1 ամսվա քաղվածքի կրկնօրինակի տրամադրում (եթե հայցվում է 6 ամսից ավել վաղեմության տեղեկատվություն)	3 000 ՀՀ դրամ
Վճարի ուշացման տուգանք	Ժամկետանց գումարի 10%, առավելագույնը՝ 20 000 ՀՀ դրամ
Վարկային սահմանաչափի գերազանցման տուգանք	Սահմանաչափը գերազանցող գումարի 10%, առավելագույնը՝ 20 000 ՀՀ դրամ
Կանխիկացման առավելագույն սահմանաչափ (օրական)	Վարկային սահմանաչափի 50%-ը կամ 500 000 ՀՀ դրամ (որն ավելի մեծ է)
Կանխիկացման գործարքների քանակ (օրական)	Առավելագույնը՝ 3
Յուրաքանչյուր անկանխիկ գործարքի առավելագույն սահմանաչափ	10 000 000 ՀՀ դրամ
Գործարքների քանակ, ներառյալ կանխիկ և անկանխիկ գործարքներ և հաշվեկշռի հարցումներ (օրական)	20
Քարտի կորստի դեպքում՝ հաճախորդի հնարավոր առավելագույն վնասի չափը, քարտի կորստի մասին տեղեկացնելուց հետո	Մինչև 25 000 ՀՀ դրամ

1 Հայաստանից դուրս կանխիկի հրատապ տրամադրման (24 ժամվա ընթացքում), ինչպես նաև քարտի հրատապ վերաթողարկման համար՝ (48 ժամվա ընթացքում), խնդրում ենք զանգահարել +374 60 655 000 Բանկի հեռախոսային կենտրոնի համարով:

Պարտադիր նվազագույն վճար	Վերջնական բացասական մնացորդի 10% (նվազագույնը՝ 10 000 ՀՀ դրամ)
Վարկային սահմանաչափ և արժույթ	Նվազագույնը՝ 1 000 000 ՀՀ դրամ Առավելագույնը՝ 10 000 000
Արտոնաշրջան (անտոկոս վարկավորում)[1]	Առավելագույնը՝ մինչև 45 օր (15 օր քաղվածքի օրվանից)

ՆՇՈՒՄՆԵՐ

- Քարտային հաշվի դրական մնացորդի դիմաց հաշվարկվում է 0% տարեկան անվանական տոկոսադրույք:
- Քարտը կարող է տրամադրվել նվազագույնը 18 և առավելագույնը 65 տարեկան անձանց:
- Քարտը վավեր է երեք տարվա ընթացքում և ենթակա է վերաթողարկման Բանկի հայեցողությամբ:
- Բանկը կարող է ժամանակ առ ժամանակ վերանայել քարտի անվանական տոկոսադրույքը՝ շուկայի փոփոխություններն արտացոլելու նպատակով:

1 Արտոնաշրջանը կիրառվում է անկանխիկ գործարքների դեպքում, և եթե քաղվածքի վերջնական մնացորդի ամբողջ վճարումը ստացվել է Բանկի կողմից մինչև/կամ Վճարման օրը: Արտոնաշրջանի տևողությունը կարող է տարբեր լինել՝ կախված թե ամսվա որ օրն է տվյալ գործարքը գրանցվել քարտային հաշվի վրա: Կրեդիտ քարտից կանխիկացում կատարելիս կանխիկացման պահից սկսած կանխիկացված գումարի վրա հաշվարկվում է տարեկան անվանական հաստատուն տոկոսադրույք՝ օրական կտրվածքով:

Ընդհանուր պայմաններ

- Բոլոր տեսակի վճարները գանձվում են ՀՀ դրամով:
- Արտոնյալ սակագները և առաջարկները կարող են չգործել հատուկ առաջարկի շրջանակներում տրամադրված բանկային պրոդուկտների և ծառայությունների դեպքում:
- Սակագներով նախատեսված վճարները գանձվում են ՀՀ դրամով: Որպես կանոն՝ դրանք Բանկի կողմից գանձվում են այն բանկային հաշվից, որով կատարվում է համապատասխան գործառնությունը: Ընդ որում, արտարժութային բանկային հաշվից գանձվելու դեպքում՝ Բանկն իրավունք ունի գանձվելիք գումարի համարժեք արտարժույթը փոխարկել ՀՀ դրամի՝ կիրառելով Բանկի կողմից այդ արժույթի համար սահմանված առքի փոխարժեքը:

  Բացառություն են կազմում Բանկի կողմից ինքնաշխատ (ավտոմատ) կերպով և սահմանված պարբերականությամբ գանձվող սպասարկման վճարները, որոնց դեպքում կիրառվում է այդ արժույթի համար տվյալ օրվա ՀՀ ԿԲ կողմից հրապարակված միջին փոխարժեքը:

  Արտարժութային գործարքների նկատմամբ կիրառվող տոկոսային միջնորդավճարները ՀՀ դրամով արտահայտելու համար կիրառվում է այդ արժույթի համար տվյալ օրվա ՀՀ ԿԲ կողմից հրապարակված միջին փոխարժեքը:
- HSBC STATUS փաթեթում ներառված ծառայությունները տրամադրվում են տվյալ ծառայության հիմնական պայմանների համաձայն, որոնք ներկայացված են յուրաքանչյուր ծառայության տեղեկատվական ամփոփագրում:
- Բոլոր այն ծառայությունները, որոնք ներառված չեն HSBC STATUS ծառայությունում, տրամադրվում են այդ ծառայությունների ստանդարտ սակագներին և պայմաններին համապատասխան:

- Այս տեղեկատվական ամփոփագրում ներկայացված բանկային ծառայությունների վերաբերյալ ամբողջական տեղեկատվությանը կարող եք ծանոթանալ յուրաքանչյուր ծառայության վերաբերյալ առանձին ամփոփագրում, ինչպես նաև «Հաճախորդների բանկային հաշիվների, բանկային ավանդների, էլեկտրոնային բանկային ծառայությունների և բանկային այլ ծառայությունների մատուցման հիմնական պայմաններ», «Ծառայությունների սակագներ», «Վճարային քարտեր և Օվերդրաֆտ» ֆիզիկական անձանց, անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների համար տեղեկատվական ամփոփագրերում, որոնք հասանելի են Բանկի ինտերնետային կայքում՝ www.hsbc.am:

- Հավելյալ տեղեկությունների, ինչպես նաև այլ ֆինանսական հաստատությունների կողմից առաջարկվող նմանատիպ ծառայությունները համեմատելու համար կարող եք այցելել նաև Ֆինանսական տեղեկատու կայքէջը հետևյալ հղումով՝ www.fininfo.am:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ «ՁԵՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒ» ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՆՄԱՆ, ՀԱՄԵՄԱՏՄԱՆ ԵՎ ՁԵԶ ՀԱՄԱՐ ԱՄԵՆԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՏԱՐԲԵՐԱԿԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՇՏԱՑՆՈՂ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ Է:

Բանկը վերահսկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից:

© «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ, 2024:

Բոլոր իրավունքները պահպանված են: